ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2021

MY FOREST
ARMENIA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻԴ

3 Հիմնադրի ուղերձը

ՄԱՅ ՖՈՐԵՍԹ ԱՐՄԵՆԻԱ

4 Մեր առաքելությունը

4 Մեր արժեքները

4 Մեր նպատակները

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2021-ԻՆ

6 Պենժամին Գումուշճեան տնկարան, Գուգարք

8 Դեբետի տնկարան

10 «Գարի և Լինդա Ասսարեաններ» ջերմոց, Վանաձոր

12 Նոր անտառներ ստեղծելու ճանապարհին

15 Մարտահրավերներ

ՄԱՐԴԻԿ

18 Մեր նպատակներն իրագործողները

ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ

22 Նվիրատու կազմակերպություններ

23 Անհատ նվիրատուներ

ՀԻՄՆԱԴՐԻ ՈՒՂԵՐՁԸ

2021 թվականը մարտահրավերներով լի, բայց միևնույն ժամանակ գոհացնող տարի էր մեզ համար: Մեզ հաջողվեց Լոռու և Տավուշի մարզերում 104 հա տարածքում տնկել ավելի քան 312.000 ծառ, տնկել մեր առաջին սոճիները և կառուցել մեր առաջին ջերմոցը: Մենք մեծացանք որպես կազմակերպություն՝ դառնալով 38 մշտական աշխատակիցներից բաղկացած թիմ՝ միևնույն ժամանակ տեղական համայնքներից ավելի քան 70 հոգու ներգրավելով տնկման և խնամքի աշխատանքներ իրականացնելու համար:

Մենք նաև սովորելու շատ առիթներ ունեցանք 2021 թվականին: Սովորեցինք լինել համբերատար և համառ, ուշադիր հետևել մեր տնկիների կենսունակությանը, փնտրել լուծումներ, փորձարկել և չզիջել, նույնիսկ երբ բնությունն անսպասելի մարտահրավերներ էր առաջ քաշում, ու կրկին լինել համբերատար: Յուրաքանչյուր քայլում մենք համոզվում էինք, որ ճիշտ ուղու վրա ենք. անտառներ ստեղծելը բարդ և մարտահրավերներով լի աշխատանք է, սակայն մենք այլևս չենք կարող ձախողվել կամ ուշանալ: Կլիման ավելի ու ավելի արագ է փոփոխվում, և մայր բնությունը կարիք ունի, որ մենք ավելի ուշադիր լինենք այն ամենին, ինչ անում ենք: Ավելին, նա մեր կարիքն ունի՝ իր առողջությունը վերականգնելու համար, հոգուտ մեզ և գալիք սերունդների:

Մեր գործունեության ամեն պահի մենք զգում և ոգեշնչվում էինք ձեր՝ մեր գործընկերների, մեր դոնորների, մեր աջակիցների ներկայությամբ: Ուրախ ենք ձեզ հայտնել, որ նույնիսկ եթե մեր ծրագրերը չափազանց հավակնոտ էին թվում, մենք կարողացանք հասնել մեր նպատակներին:

2022 թվականն ավելի բեղմնավոր տարի է լինելու մեր կազմակերպության համար: Մեր թիմի լրջությունը, նվիրվածությունն ու պրոֆեսիոնալիզմը նկատել են շատերը: Մեզ աջակցելու ցանկություն ու ոգևորություն են հայտնել մի շարք կազմակերպություններ Հայաստանում և Հայաստանից դուրս: Մենք անհամբեր սպասում ենք միասին աշխատելուն՝ դրական և բովանդակալից ազդեցություն ունենալու համար:

Մեր անտառագետներն այժմ աշխատում են Լոռու մարզում մեծ ու գեղեցիկ 1500 հա տարածքում անտառվերականգման աշխատանքների պլանավորման վրա: Երբ ծածկված լինի ծառերով ու թփերով, այն կդառնա հրաշալի անտառ՝ ուժեղ էկոհամակարգով ու հարուստ կենսաբազմազանությամբ:

Շնորհակալություն բոլորիդ:

ԱՆՏՐԷ ԳՈՒՄՈՒՇՃԵԱՆ
Մայ Ֆորեսթ Արմենիայի հիմնադիր

ՄԱՅ ՖՈՐԵՍԹ ԱՐՄԵՆԻԱ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հզորացնելով տեղական համայնքները՝ մեր առաքելությունն է գիտնականների և փորձառու անտառագետների ղեկավարությամբ կայուն կերպով մեծացնել անտառային ծածկույթը և միայն էնդեմիկ ծառատեսակներ տնկելու շնորհիվ պահպանել կենսաբազմազանությունը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Մենք առաջնորդվում ենք հետևյալ արժեքներով.

- **Թափանցիկություն**
- **Պատասխանատվություն**
- **Արդյունավետություն**
- **Հոգատարություն**

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մեր նպատակը տարեկան մոտ 120 հա նոր անտառներ տնկելն է, որը կազմում է մոտ 400.000 ծառ: Լիահույս ենք, որ ժամանակի ընթացքում այս թվերը կաճեն:

ՄԵՐ ԱՃՈՒԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2021-ԻՆ

2021-ը կարևոր տարի էր մեր կազմակերպության տնկարանների և տարբեր ենթակառուցվածքների զարգացման համար:

ՊԵՆԺԱՄԻՆ ԳՈՒՄՈՒԾՀԵԱՆ ՏԵԿԱՐԱՆ, ԳՈՒԳԱՐՔ

2021-ին մեր դրոշակակիր տնկարանում՝ Պենժամին Գումուշճեան տնկարանում շարունակվել են ենթակառուցվածքների զարգացման և բարեկարգման աշխատանքները: Առաջնային նպատակ է յուրաքանչյուր տարի էլ ավելի բարձրացնել տնկիների որակը, ինչն ուղիղ կապ ունի անտառտնկման տարածքներում դրանց կպչողունակության բարձրացման հետ: Բարձր որակի տնկիներն ավելի մեծ հնարավորություն ունեն դիմակայելու անբարենպաստ եղանակային պայմաններին:

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Մենք տարբեր բարելավումներ արեցինք մեր տնկարանում արտադրողականությունը բարձրացնելու համար: Ընդարձակեցինք ոռոգման համակարգը և տնկարանում ավելացրինք 40 ցողման գլխիկներ իրենց հենարաններով: Սա հնարավորություն տվեց մեզ ավելի արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը, հատկապես միամյա սոճիների համար, որոնք հենց սկզբից ջրի կարիք ունեն:

Մեկ այլ լուրջ մտահոգություն էր մկների առկայությունը տնկարանում. 2020թ. դրանք բազմաթիվ երիտասարդ տնկիների արմատներ էին վնասել: 2021թ. փետրվարին մենք բերեցինք 2 կատու, և նրանք բավականին արդյունավետ եղան այս խնդիրը վերացնելու հարցում: Արդյունքում մենք գրեթե ոչ մի տնկի չենք կորցրել: Պենժամին Գումուշճեան տնկարանում մենք աճեցնում ենք 600.000 տնկի, որոնցից 99.000-ը տնկվել են անտառապատման տարածքներում 2021թ., իսկ մնացածը պատրաստ կլինեն տնկման 2022թ. գարնանը և աշնանը:

ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Մենք տեղադրել ենք ջրի մաքրման փոքր էկոլոգիական համակարգ, որը նախատեսված է կոյուղաջրերի մաքրման համար: Համակարգից դուրս եկող ջուրը 98%-ով մաքրված է և օգտագործվում է տնկիների ոռոգման համար՝ դրանով իսկ օպտիմալացնելով ջրային ռեսուրսների օգտագործումը:

ԴԵՐԵՏԻ ՏԿԱՐԱՆ

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

2020 թվականին տնկիները մեծապես տուժել էին: Մեզ անշուշտ անհրաժեշտ էր ոռոգման ջուր ապահովել Դեբետի տնկարանում: Դա բավականին բարդ ու հետաքրքիր աշխատանք էր, քանի որ մոտակայքում ջրի միակ աղբյուրը 80 մետր խորություն ունեցող ձորում հոսող գետն էր, իսկ մեր խնդիրն էր առանց հոսանք օգտագործելու ձորից ջուր բարձրացնել: Այդ նպատակով մենք ձորում տեղադրեցինք հիդրավլիկ պոմպ և 200 մետրանոց խողովակ ջուրը վերև բարձրացնելու համար: Ճիշտ է, պոմպը մշտապես խնամքի կարիք ունի, բայց տնկարանն արդեն ապահովված է ոռոգման ջրով, ինչը կարևոր խնդրի լուծում էր:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՏՆԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2021-ին աշխատողների տնակը որոշակիորեն բարելավեցինք՝ ավելացնելով բացօթյա տաղավար: Այն տնկարանների աշխատակիցներին կեսօրի ընդմիջման ժամանակ պաշտպանում է անձրևից և արևից:

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Ոռոգման համակարգի շնորհիվ Դեբետի տնկարանում արտադրողականությունը զգալիորեն աճել է: Գտնվելով 1000մ բարձրության վրա՝ Դեբետի տնկարանը բույսերի համար ավելի երկար վեգետացիոն շրջան է ապահովում, ինչը վերջիններիս թույլ է տալիս ավելի լավ զարգանալ նախքան անտառապատման տարածքներ տեղափոխվելը:

Տնկարանում մարտից մինչև նոյեմբեր եռուզեռ էր. Դեբետի տնկարանը տարեկան ապահովում է 200.000 տնկի, որոնցից 45.000-ը 2021թ. գարնանն ու աշնանը տնկադաշտ է տեղափոխվել:

«ԳԱՐԻ ԵՒ ԼԻՆԴԱ ԱՍՍԱՐԵԱՆՆԵՐ» ՋԵՐՄՈՑ, ՎԱՆԱՁՈՐ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ համալսարանի Վանաձոր քաղաքի մասնաճյուղի բակում ավարտեցինք ժամանակակից ենթակառուցվածքներով ջերմոցի տեղադրման աշխատանքները:

Ջերմոցը մեզ հնարավորություն կտա 2022թ. աճեցնել շուրջ 72.000 տնկի փակ արմատային համակարգով՝ թաղարների մեջ: Նման պայմաններում աճեցված տնկիներն ավելի կենսունակ են ու կապահովեն ավելի բարձր արդյունք տնկումներից հետո: Ջերմոցը նաև թույլ կտա մեզ աճեցնել այնպիսի բույսեր, որոնք դժվար է բաց արմատային համակարգով աճեցնել տնկարաններում:

Ջերմոցի առկայությունը համալսարանի բակում հնարավորություն կտա ուսանողներին տարբեր փուլերում մասնակցել աշխատանքներին, հետազոտել և ուսումնասիրություններ անել:

ԽՈՐ ԱՆՏԱՌԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՒՆ

Վահագնի
Ընդհանուր՝ 6 հա
Տնկված՝ 6 հա
Ծիրակամուտ
Ընդհանուր՝ 86 հա
Տնկված՝ 35 հա
Դիլիջան ազգային պարկ
Ընդհանուր՝ 20 ha
Տնկված՝ 20 ha
Ջրաշեն 1
Ընդհանուր՝ 110 հա
Տնկված՝ 81 հա
Mashaveri
E117
Shulaveri
Gora Lalvar
P51
A310
Akori
A304
A328
P50
1556 m
Gora Urasar
Lori
A310
Tavush
Ijeva
A330
Dilijan
Vanadzor
A329
A330
Agstev
Tsovagyugh
T'ezh Lerr
Kasagh
Marmarik
Meghradzor
Aparan
ARMENIA
Sevan
Aragats

Ամբողջ տարի մենք ամեն օր նախապատրաստվում ենք այն օրվան, երբ ընդլայնված թիմով պիտի բարձրանանք սար ու սկսենք սեզոնի ծառատունկը: 2021թ. մենք տնկել ենք ավելի քան 144.000 ծառ և ցանել ռեկորդային 168.000 կաղնու սերմ: Այս թվերը ներառում են նաև մոտ 30.000 ծառ, որոնք մենք վերատնկել ենք Շիրակամուտում:

Մեր գործունեության երկրորդ տարում մենք արդեն շատ մոտ ենք մեր տարեկան նպատակին:

2021թ. գարնանը և աշնանը տնկել ենք 312.000 ծառ ավելի քան 104 հա տարածքում:

Խնամել ենք նաև 2020-ին տնկված ծառերը: Տնկված ծառերի պահպանումը անտառների ստեղծման հաջողության բանալիներից է: Այն շարունակական գործընթաց է, մինչև տնկիները դառնան մոտ 3 տարեկան, և արդեն վստահ լինենք, որ ինքնուրույն կարող են մեծանալ վայրի բնության մեջ:

Տարբեր ծառատեսակներ ենք տնկել, բոլորն էլ Հայաստանի էնդեմիկ՝ կաղնի խոշորառէջ, սոճի սովորական, թխկի դաշտային, թխկի սպիտակ, թխկի տրաուտվետերի, հացենի սովորական, ինչպես նաև թփեր՝ ասպիրակ, թանթրվենի, կիպրող և այլն, որոնք բոլորն էլ Հայաստանի էնդեմիկ ծառատեսակներ են:

ՄԱՐՏԱՐԱԿԵՐՊԵՐ

Նախկին փորձից պարզ էր, որ պատշաճ կերպով պետք է նախապատրաստվել ուշ գարնանային ցրտահարություններին: Պենժամին Գումուշճեան տնկարանում, որը տեղակայված է ավելի բարձր գոտում, ցրտահարությունն ավելի հավանական է՝ ի տարբերություն Դեբետի տնկարանի: Երբ բույսերը ծլեցին, մենք սկսեցինք ուշադիր հետևել ջերմաստիճանի տատանմանը, և երբ բացասական ջերմաստիճանի կանխատեսում կար, անմիջապես գործի անցանք: Նախ և առաջ նոր ծլող բույսերը ծածկեցինք ծղոտով, որը թույլ տվեց բարձրացնել մակերևութային սառեցման հորիզոնը մի քանի սանտիմետրով: Դա որոշիչ դեր խաղաց սերմաբույսերի պաշտպանման հարցում:

Մյուս կողմից տնկարանում առկա էին ասեղնատերևավոր տնկիներ՝ 15 սմ և ավելին բարձրությամբ, որոնց համար անհրաժեշտ էր կիրառել այլ մեթոդ: Այստեղ ծղոտապատման մեթոդով ցրտահարության դեմ պայքարը ուներ մեկ նշանակալի բացասական կողմ. հավանականություն կար, որ ծղոտի տեղադրման աշխատանքների ժամանակ կվնասվեին բույսերի մատղաշ ցողունները: Որոշվեց կիրառել այլընտրանքային մոտեցում, այն է՝ մեկուսացված կրակի օջախներ ստեղծել բոլոր ասեղնատերև և այլ բույսերի երկայնքով, որոնք մակերևութային ջերմային շերտ կստեղծեին, և բույսերը չէին ցրտահարվի:

Ցրտահարության դեմ պայքարը տվեց իր արդյունքները, և արդեն գարնան կեսին տնկարանում աճում էին լիովին առողջ և կենսունակ բույսեր: Դրանց մեծ մասն արդեն գտել են իրենց հիմնական տեղակայման վայրը՝ տնկադաշտը:

2021թ. հունիսին մենք ունեցանք մեկ այլ կլիմայական էքստրեմում, որն այս անգամ երաշտային շրջանն էր Շիրակամուտի անտառտնկման տարածքում: Մատղաշ սերմաբուսակների արմատային համակարգը դեռևս զարգացած չէ այն աստիճանի, որ կարողանա հողի ստորին շերտերից խոնավություն կլանի: Անձրևի տևական բացակայության արդյունքում տնկիները հազարներով չորանում էին:

Բարեբախտաբար, մոտակայքում ոռոգման փոքրիկ ջրանցք կար, և անհապաղ որոշում կայացվեց տեղադրել 4000մ խողովակաշար 30հա մակերես ունեցող սարի լանջերին այնպես, որ հնարավոր լինի ջրել ամբողջ մակերեսը: Գործի դրվեց երկու պոմպ, որից հետո 8 բանվոր 8 շաբաթվա ընթացքում շուրջօրյա ջրեցին ամբողջ տարածքը: Սա թույլ տվեց փրկել տասնյակ հազարավոր երիտասարդ տնկիներ: Բացի այդ, մենք սկսեցինք օգտագործել ցանքածածկ՝ խոնավությունը պահպանելու համար:

Հետագա երաշտների դեմ պայքարելու համար մենք աշնանից սկսեցինք նոր մեթոդներ օգտագործել. յուրաքանչյուր փոսում, որտեղ տնկվում էին տնկիներ կամ ցանվում կաղիններ, ավելացվում էր ցեոլիտ: Ցեոլիտը բնական հանքանյութ է, որը կլանում և պահպանում է խոնավությունը: Չոր սեզոնին դանդաղորեն բաց թողելով այն հողի մեջ՝ ցեոլիտը կօգնի տնկիների արմատներին հաղթահարել երաշտի շրջանը: Մենք ուսումնասիրելու ենք, թե յուրաքանչյուր բույսի համար ինչ քանակի ցեոլիտն է օպտիմալ:

Ձեռնարկեցինք մեկ այլ կարևոր քայլ՝ մեր տնկիների կենսունակությունը բարձրացնելու համար: Բարելավեցինք տնկիների՝ սարն ի վեր տեղափոխ-ման մեր ընթացակարգերը, որպեսզի դրանց արմատները խոնավ մնան մինչև տնկման պահը:

Հիմա, երբ հետ ենք նայում ու տեսնում կենդանի բույսերը, որոնք աճում են այդ տնկադաշտում, էլ ավելի ուժգին ենք զգում յուրաքանչյուր ծառի արժեքը: Այս ամենը մեզ ստիպում է կրկին գիտակցել, թե ինչքան բարդ ու մարտահրավերներով լի գործ է անտառ հիմնելը: Միևնույն ժամանակ, հենց այս դժվարությունն է բոլորիս մեջ ամրապնդում վճռականությունն անելու այն ամենը, ինչ անհրաժեշտ է հաջողության հասնելու համար:

ՍԱՌԴԻԿ

Մինչ սերմերն աճում են մեր տնկարաններում, մեր մասնագետները՝ Վահե Մարտիրոսյանը և Տարոն Ալեքսանյանը, մեր հիմնադիր Անտրէ Գումուշճեանի ուղեկցությամբ, ուսումնասիրում են Լոռու մարզի տնկադաշտերը՝ գտնելու համապատասխան վայրերը և գնահատելու դրանց ներուժը: Այնուհետև սկսվում են երկար նախապատրաստական աշխատանքները՝ համայնքների հետ քննարկելը և հողի ապահովման համար վարչական գործընթաց սկսելը:

Մեր կազմակերպության մշտական աշխատողների գրեթե 80%-ը Լոռու մարզի բնակիչներ են: Նրանք աշխատում են մեր երկու տնկարաններում, սերմից ստանում տնկիները: Ծառատունկի և խնամքի սեզոնին նրանց են միանում մինչև 90 հոգի՝ կրկին Լոռու մարզից: Սարերում աշխատող մարդիկ խորն են զգում իրենց առաքելությունը. նրանք անմիջական մասնակիցն են անտառների ստեղծման այս կարևոր գործի:

– Ես հավանաբար չեմ տեսնի իմ տնկած անտառը, բայց թոռներս գիտեն, որ այս սարի վրա տարիներ հետո անտառ է լինելու: Ուրախ եմ, որ իմ թոռներն ինչ այսպես էլ են հիշելու, – փիչ հուզվելով անկեղծանում է մեր աշխատակից տիկին Կարինեն:

«Շատ ուրախ եմ, որ մենք աշխատանք ունենք այսօր: Սկզբում ես մենակ էի եկել, բայց երբ տեսա, թե ինչ հետաքրքիր ու կարևոր գործ ենք անում, կնոջս էլ առաջարկեցի միանալ ինձ, ու հիմա մենք ընտանիքով ենք ներգրավված աշխատանքներում, մեծ սիրով աշխատում ենք», - նշում է մեր սեզոնային աշխատող Վահրամը:

«Բոլորիս համար ծառ տնկելը նման է երեխայի ծնունդին: Երեխայի ծնունդից հետո ծնողները պահում-խնամում են նրան, տանում մանկապարտեզ ու դպրոց, և մի օր նա սկսում է ապրել իր սեփական կյանքով: Նույնը ծառն է. այ այստեղ՝ տնկարանում, ծնվում և մեծանում են ծառերը, հետո իրենց ուղարկում ենք անտառ՝ ինքնուրույն կյանք վարելու», – նշում է «Պենժամին Գումուշճեան» տնկարանի մեր աշխատակից Սուրենը:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ

2021 թվականի նշանակալի իրադարձությունների ու ձեռքբերումների համար շնորհակալ ենք մեր աջակիցներին. ձեր շնորհիվ է, որ մեր նպատակները փոքր, բայց կայուն քայլերով իրագործվում են:

ԿԻՐԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՀԱՏ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

ԱՄՍԱԿԱՆ

- Սամվել Ասատրյան
- Սերժ Արտունոֆֆ
- Անտրէ Գումուշճեան
- Ջանիկ Գումուշճեան
- Մարլեն Դյուրինքս
- Ալեքսանդր Կաժյան
- Օլյա Հակոբյան
- Անի Հարությունյան
- Հ. Մանուկյան
- Լիլիթ Մարտիրոսյան
- Նարե-Արփի Մարտիրոսյան
- Քրիստիան վան դեն Բոգարտ
- Ֆիլիպ Ֆրանսուա

ՄԻԱՆԳԱՄՅԱ

- Դր. Գարի Ասսարեան
- Գարեն Արսլանյան
- Լուսինե Բուտոն Քերովբյան
- Դեյվիդ և Պատրիսիա Գրեյսոն
- Մարլեն Դյուրինքս
- Անդրե Թահթա
- Հովսեփ Թահթա
- Արմինե Խաչատրյան
- Կորյուն Խաչատուրեան
- Միեր Խաչատուրեան
- Նայիրի Խաչատուրեան
- Վանա Կասսարջեան
- Շահէ և Եղիզ Կիրոկյաններ
- Սվետլանա Հովհաննիսյան
- Նինո Մարտին
- Պանաշ և Սանվի Շահ
- Տաթև Պետրոսյան
- Բերնարդ Սի
- Արեգ Վարդանեան
- Ջավեն Տեր-Հարությունեան
- Յերիա Տորանեան
- Շարլոտ Օշար
- Գեսպարդ Ֆիգյեր

Շնորհակալություն նաև բոլոր նրանց, ովքեր նվիրատվություն են կատարել անանուն:

Եթե կյանքում ծառ չեք տնկել, հիմա ճիշտ պահն է միանալու մեզ՝ ոչ միայն ծառ տնկելու, այլ վերականգնելու մեր երկրագնդի անտառածածկույթը: Միացեք մեր ծրագրին ու նվիրաբերեք ամսական 1, 5, 10 և ավելի ծառ կամ կատարեք միանգամյա նվիրատվություն:

«My Forest Armenia» բնապահպանական ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Ա. Աբելյան փ. 6/4, 311 սենյակ
+374 11 202 919
info@myforestarmenia.org
www.myforestarmenia.org

SCAN ME TO PLANT